

Գիտություն

ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

№ 7-8

(237)

2011թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի բերք • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը՝ հայ ճարտարապետությանը նվիրված լավագույն աշխատությունների հեղինակներին

կենտրոնի» հիմնադիր-ղեկավար, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Ադրիանո Ալպագո Լովելոն, ով հիմնադրել էր «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը, հեղինակել «Հաղպատ», «Սանահին», «Ամբերդ», «Երեբունյաց», «Կեչառիս», «Ամաղու Նորավանք» պրակները, մեծապես նպաստել հայ արվեստի միջազգային գիտաժողովների կազմակերպմանը:

1990-ականներին ՀՀ ԳԱԱ կանոնադրությունից անհիմն հանվեցին գիտական աշխարհում բավական մեծ հեղինակություն ունեցող Թորոս Թորամանյանի և հայագիտության բնագավառում Սեսրոպ Մաշտոցի անվան մրցանակները: Եվ միայն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջարկությամբ և ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի աջակցությամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը 2010-ին վերականգնեց Թ.Թորամանյանի անվան մրցանակը:

2010թ. մրցույթին Հայաստանի գիտական կազմակերպությունների կողմից առաջադրվեցին ճարտարապետության դոկտորներ Մուրադ Հասարայանը և Գառնիկ Շախլյանը, որոնք էլ միաձայն արժանացան Թ.Թորամանյանի մրցանակին:

Ս.թ. հունիսի 15-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում նրանց հանձնվեցին հուշամեդալները և վկայագրերը: Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Սարտիրոսյանը կարևորեց Թ.Թորամանյանի անվան մրցանակի վերականգնման անհրաժեշտությունը հայագիտության այս բնագավառի հետագա զարգացման համար: Ներկայացնելով Թ.Թորամանյանի անվան մրցանակի չորս տասնամյակի արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արաթ Աղասյանը բնութագրեց սնցյալում Թ.Թորամանյանի անվան մրցանակի դասիներին, նշեց նրանց մեծ ա-

վանը հայ ճարտարապետության ուսումնասիրման և նվաճումների պրոպագանդան գործում, հիմնավորեց մրցանակի վերականգնման փաստի կարևորությունը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Վիգեն Ղազարյանը համառոտ ներկայացրեց դասիներին, նրանց աշխատանքային ուղին, գիտական և հասարակական բազմակողմանի գործունեությունը:

Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն, ճարտարապետության թեկնածու Անուշ Տեր-Սինասյանը խոսեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ պետական մրցանակի դասիներին Սուրադ Հասարայանի անցած գիտական բեղմնավոր ուղու մասին, նշեց նրա ավանդը հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության գործում: Մ.Հասարայանն առաջինն է ուսումնասիրել ու

գիտական շրջանառության մեջ դրել վաղմիջնադարյան Հայաստանի մի շարք կարևոր հուշարձաններ, Արցախի, Սյունիքի ճարտարապետության համալիրները, Թբիլիսիի հայկական եկեղեցիները, հետագուտել հայ և մերձակա ու հեռավոր երկրների ճարտարապետական առնչությունները, առաջինն է շարադրել հայ ճարտարապետության պատմությունը սկզբնավորումից մինչև մեր օրերը: Թ.Թորամանյանի անվան մրցանակը նրան շնորհվեց «Հայկական վաղբրիստոնեական ճարտարապետությունը» (Մոսկվա, 2010) աշխատության համար, որում Մ.Հասարայանը ներկայացնում է հայկական ազգային շինարարական արվեստի ծավալումը 4-7-րդ դդ., դրա նվաճումները և ավանդը համաբրիստոնեական եկեղեցական ճարտարապետության մեջ:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը ներկայացրեց ճարտարապետության դոկտոր, ԵՃԿԳ պրոֆեսոր Գառնիկ Շախլյանի վաստակը հայ ճարտարապետության պատմության հետազոտման գործում: Նշվեցին նրա հիմնարար աշխատությունները՝ նվիրված Լոռի-Գուգարքի ճարտարապետական դպրոցին, գմբեթավոր բազիլիկ տիպի հանգուցային հուշարձան Օծունի տաճարին, 8-9-րդ դդ. Հայաստանի ճարտարապետությանը, Գ.Շախլյանի «Ոգի, զույն, կերպար» (Երևան, 2009) գրքի արժանիքները, որի համար նա ստացավ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը:

Ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը, շնորհավորելով մրցանակակիրներին, ՀՀ ԳԱԱ նախագահությանն առաջարկեց վերականգնել նաև հայագիտության բնագավառում ՀՀ ԳԱԱ Սեսրոպ Մաշտոցի անվան մրցանակը, իսկ Թ.Թորամանյանի անվան մրցանակը հաջորդ անգամ հանձնել ոչ թե Երևանում, այլ Անիում:



ՀԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ 1969-ին սահմանվել էր Թորոս Թորամանյանի անվան մրցանակ (հուշամեդալ և վկայագիր), որը հայ ճարտարապետությանը նվիրված հիմնարար ուսումնասիրությունների համար չորս տարին մեկ անգամ շնորհվում էր հայ և օտարազգի գիտնականներին: Մրցանակի հանձնումը կատարվում էր հայ ճարտարապետության գլուխգործոց Ջվարթնոցում:

1972թ. մրցանակի առաջին դասիներին հայագիտության երախտավոր Նիկոլայ Տոկարսկին է (Լենինգրադ), ով 20-րդ դարի սկզբին Ն.Մառի արշավախմբում աշխատել էր հին Հայաստանի լեզվաբանական մայրաքաղաք Անիում և առաջինը շարադրել հայ միջնադարյան ճարտարապետության պատմությունը:

1978թ. մրցանակը շնորհվեց Վարազդատ Հարությունյանին (Երևան), ով բառասուն տարի գլխավորել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնը, ում «Հայ ճարտարապետության պատմություն» ձեռնարկով կրթվել են Հայաստանի ճարտարապետների բազմաթիվ սերունդներ, և Հովհաննես Խալիֆախյանին (Մոսկվա)՝ «Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը» մենագրության հեղինակին, ով «Համաշխարհային ճարտարապետության պատմություն» բազմահատորյակի (Մոսկվա) խմբագիրն էր և հայ ճարտարապետությանը վերաբերող բաժինների հեղինակը:

1984թ. մրցանակը հետմահու շնորհվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ (1958-1982), ՀԽՍՀ պետական մրցանակի դասիներին, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ալեքսանդր Սահինյանին՝ Գառնի ամրոցի անտիկ և հելլենիստական հուշարձանների գիտական ուսումնասիրության և Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման համար:

1990թ. մրցանակին արժանացան Հռոմի «Հայ ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի» հիմնադիր-ղեկավար, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսոր Պաուլո Կունենոն՝ 1960-ականներին Արևմտյան Հայաստան և ՀԽՍՀ կատարած բազմաթիվ գիտարշավների ընթացքում հավաքած նյութերի հիման վրա հրատարակած «Հայաստանի 4-19-րդ դարերի ճարտարապետությունը» (Հռոմ, 1988) երկհատոր (շուրջ 1000 էջ) ծանրակշիռ աշխատության համար և Միլանի «Հայ մշակույթի ուսումնասիրության